Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 8

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բաղալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Վ. Սաֆարյանը և Ա. Ներսիսյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Բաղդասարյանը, աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Զ. Ամիրյանը, քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի պաշտոնակատար Շ. Քոթանյանը, զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետի պաշտոնակատար Ի. Բարսեղյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 21.01.2022թ. N 2-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտնի ավագանու համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր ուղղակի վաճառքի կարգով օտարելու վերաբերյալ>> 18 հոկտեմբերի 2021թ.-ի N38 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում մինչև 1000 գլուխ խոշոր եղջերավոր կենդանու համար նախատեսված անասնապահական ֆերմայի կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ուղղակի վաճառքի ձևով <<Միլքիզ>> ՍՊ ընկերությանը վաճառելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում խաղողի այգիների հիմնման, գինեգործարանի, մառանի եվ հյուրատան կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ուղղակի վաճառքի ձևով <<Արագածոտնի այգիներ>> ՍՊ ընկերությանը վաճառելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

8. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

9. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կարբի և Օշական բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

11. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

12. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 2</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում: Շ. Վահանյանը նշեց, որ առաջարկվող փոփոխության հիմնական նպատակը կայանում է նրանում, որ դեռևս 2021թ. մնացած սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումն ապահովելն է:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 3</u> - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 21.01.2022թ. N 2-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 21.01.2022թ. N2-Ն որոշումը լրացնել հավելված 1.5-ով: Շ. Վահանյանը նշեց, որ առաջարկվող լրացումն անհրաժեշտ է խմելու ջրի մատակարարումը հավուր պատշաճի իրականացնելու համար:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *<<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտնի ավագանու համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր ուղղակի վաճառքի կարգով օտարելու վերաբերյալ>> 18 հոկտեմբերի 2021թ.-ի N38 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ուժը կորցրած ճանաչել «Համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր ուղղակի վաճառքի կարգով օտարելու վերաբերյալ» 18 հոկտեմբերի 2021թ.-ի N 38 որոշման 7-րդ և 8-րդ կետերը:

Զեկուցողը նշեց, որ նշված որոշման նախագիծն ուղիղ կապ ունի հաջորդիվ ներկայացվելիք որոշման նախագծի հետ և առավել մանրամասն կներկայացվի վերջինիս ներկայացման ժամանակ:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում մինչև 1000 գլուխ խոշոր եղջերավոր կենդանու համար նախատեսված անասնապահական ֆերմայի կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ուղղակի վաճառքի ձևով <<Միլքիզ>> ՍՊ ընկերությանը վաճառելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>

ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով <<Միլքիզ>> ՍՊ ընկերության՝ ի դեմս տնօրեն Սեդրակ Աշոտի Մկրտչյանի դիմումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համաձայնություն տալ <<Միլքիզ>> ՍՊ ընկերության ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում մինչև 1000 գլուխ խոշոր եղջերավոր կենդանու համար նախատեսված անասնապահական ֆերմայի կառուցման ներդրումային ծրագրին, ինչպես նաև համաձայնություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 19.9999 հա և 4.6445 հա հողամասերը, կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով, ուղղակի վաճառքով, օտարել <<Միլքիզ>> ՍՊ ընկերությանը: Միաժամանակ, առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը և հաստատմանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում խաղողի այգիների հիմնման, գինեգործարանի, մառանի եվ հյուրատան կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ուղղակի վաճառքի ձևով <<Արագածոտնի այգիներ>> ՍՊ ընկերությանը վաճառելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով «Արագածոտնի այգիներ» ՍՊ ընկերության՝ ի դեմս տնօրեն Արա Գրաթելի Սարգսյանի դիմումը, համաձայնություն տալ <<Արագածոտնի այգիներ>> ՍՊ ընկերության ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում խաղողի այգիների հիմնման, գինեգործարանի, մառանի և հյուրատան

կառուցման ներդրումային ծրագրին: Միաժամանակ, առաջարկեց համաձայնություն տալ նաև <<Արագածոտնի այգիներ>> ՍՊ ընկերությանը ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում ներդրումային ծրագիրն իրականացնելու համար, համայնքի սեփականություն հանդիսացող սույն որոշման նախագծի հավելված 1-ով նշված հողամասերն ուղղակի վաճառքի եղանակով օտարելուն:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբական անձանց՝ գյուղ. նշանակության հողամասերում գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7 հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի պահանջներով, համաձայնություն տալ գյուղատնտեսական արտադրական նշանակության փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող մի շարք հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կարբի և Օշական բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.11.2021թ. N239 և 17.01.2022թ. N6 դրական եզրակացությունները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի և ՀՀ կառավարության N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի պահանջներով, հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կարբի և Օշական բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-

վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալուն:

Հ. Բաղդասարյանը նշեց, որ սույն որոշման նախագիծը կազմված է երկու հավելվածներից՝ 1-ին հավելվածում նշված են բնակավայրերի նշանակության հողամասերը, իսկ երկրորդում՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքները:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելուն: Հարություն Բաղդասարյանը նշեց, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշմամբ հաստատված 9-րդ կետին համապատասխան՝ անհրաժեշտ է համաձայնություն տալ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելուն: Ինչպես նաև առաջարկեց վարձակալության տրամադրելիս սահմանել վարձավճարները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N898-Ն որոշմամբ հաստատված կադաստրային գները՝ համաձայն սույն որոշման նախագծի հավելվածի:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2022 թվականի ապրիլի 11-ը, ժամը՝ 17:00-ին:

Նիստի կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր.7:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի մարտի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____

ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ _____

ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ _____

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ